ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/72, 03.06.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Կոնսէլ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» գնանշման հարցում

Գնման առարկան՝ տնտեսող լամպերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել Պատվիրատուին կասեցնել Դատական դեպարտամենտի կողմից հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով Գնանշման Հարցման մասին ընթացակարգը և Պատվիրատուից պահանջել վերանայելու նշված ընթացակարգի գնման առարկայի բնութագիրը՝ հավասար մրցակցային պայմաններ ստեղծելով պոտենցիալ այլ մատակարարների մասնակցությունն ապահովելու նկատառումներից ելնելով կամ անվավեր ճանաչել նշված բաց մրցույթը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

03.06.2020թ.

Հայաստանի Հանրապետության
Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԲՈՂՈՔ

Պատվիրատու՝ Դատական Դեպարտամենտ

Պատվիրատուի հասցեն՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Հայտարարություն Գնանշման Հարցման Մասին
Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29»

Գնման Առարկայի Բնութագիրը՝ Տնտեսող լամպեր

Չափաբաժինների համարը՝ 2, 3, 4 չափաբաժիններ

Հայտնում ենք Ձեզ, որ Դատական դեպարտամենտի կողմից Գնանշման Հարցման մասին «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով հայտարարության միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները:

Մասնավորապես, գնման առարկայի տեխնիկական բնութագիրը ձևակերպված է մասնագիտական թերություններով և որոշ պարամետրերի սխալ սահմանմամբ, ինչը սահմանափակում է հնարավոր մասնակից սուբյեկտների շրջանակը:

Ուստի, խնդրում ենք Ձեզ կասեցնել Դատական դեպարտամենտի կողմից հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով Գնանշման Հարցման մասին ընթացակարգը և Պատվիրատուից պահանջել վերանայելու նշված ընթացակարգի գնման առարկայի բնութագիրը՝ հավասար մրցակցային պայմաններ ստեղծելով պոտենցիալ այլ մատակարարների մասնակցությունն ապահովելու նկատառումներից ելնելով կամ անվավեր ճանաչել նշված բաց մրցույթը:

Առդիր՝

1. ընկերության պետական գրանցման վկայականի պատճեն – 3 էջ
2. Հայտարարություն իրավերի պարզաբանման մասին – 2 էջ
3. Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճեն – 1 էջ

Հարգանքով,
<<Կոնսէլ>> ՍՊԸ տնօրեն
Ա. Փափազյան

«Կոնսէլ» ՍՊԸ
ՀՀ, Երևան-0043,
Արարատյան 90/2
Հեռ.՝ +37410 465080, 465070
Ֆաքս՝ +37410 465070 (117)

"Consel" LTD.
90/2 Araratyan Str.,
Yerevan-0043, RA
Tel: +37410 465080, 465070
Fax: +37410 465070 (117)
E-mail: info@consel.am

ООО "Консэл"
РА, Ереван-0043,
ул. Араратяна 90/2
Тел.: +37410 465080, 465070
Факс: +37410 465070 (117)